

# ՊԵՐՍԻԱՆԵՐԸ ՊԵՐՍՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՒ

ՆՐԱՆՑ ԹԱՐԼԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՏ.

(250 Զրիստոսից առաջ — 226 Զրիստոսից յետոյ)

## Ն ա խ ա ղ ա ն

Հայաստանի ճակատագիրը սերտ կապուած է եղել միշտ իւր հարեան մեծ աղգերի ճակատագրի հետ։ Ուստի և հայոց իսկական պատմութեան գիտութիւնն հնարաւոր է այդ աղգերի պատմութեան ճանաչողութեամբ։ Եթէ մեր հնագոյն պատմութեան թիւերն հիւսուած են ասորա—բաբելոնական աղգերի պատմութեան թիւերի հետ։ Հին և միջին պատմութեան թիւերն անքակտելի կերպիւ կապակցուած են պարսկական պատմութեան հետ։ «Արարատ»ի էջերում արդէն իսկ պարսկական պատմութեան մի գլխաւոր շրջանն Սասանեան պատմութիւնն, զետեղեցինք։ այժմ մտադիր ենք պարթեւ—հայկական շրջանի պատմութիւնն անելու համաձայն յոյն և լատին աղբիւրների։ Ինչպէս Սասանեան պատմութիւնը նոյնպէս և պարթեւականը մշակուած է անգլիական հանրագիտակբառարանի [Encyclopaedia Britannica] համար արեւելեան պատմութեան երկու հեղինակաւոր գիտնականների ձեռքով։ առաջինը Թ. Նէօլդէքէի, իսկ երկրորդը վաղամեծ Ա. ֆոն Գուլշմիդի։ որ յայտնի է հայ բանասիրութեան մէջ իւր Խորենացու և Ագաթանգեղոսի հիմնաւոր քննութիւններով։ Արեւելեան աղգերի պատմութիւնն համաձայն յոյն և լատին հեղինակների, դրամագիտութեան և արեւելեան աղբիւրների վերականգնելու գործը պատմական գիտութեան գծուարագոյն խնդիրներից մէկն է։ որ այնքան յաջողութեամբ լուծել են այդ երկու գիտնականները։ Թէպէտ արդէն մի տասնամեայ շրջան է անցել այդ պատմութեանց հրատարակութիւնից։ սակայն դրանք ցայժմ իսկ գիտութեան վերջին խօսքն են կազմում։ Գուլշմիդի շարագրութեան գերմաներէն բնագիրն «Երանի և նրա դրացի երկրներ պատմութիւնը» վերնագրով հրատարակել է նոյն գիտնականի մահուանից վերջը նրա բարեկամ Նէօլդէքէն։

Գուլշմիդի շարագրութեան ամբողջ թարգմանութիւնը թէպէտ և կարող էր օգտակար լինել

1. Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, von Alfred von Gutschmid. Mit einem Vorwort von Th. Nöldeke. Tübingen 1888. verlag der H. Lauppschen Buchhandlung,

հայկական պատմութեան ուսումնասիրողներին։ սակայն տեղի սղութեան պատճառով ստիպուած ենք միայն հայկական յարարերութիւններին վերաբերեալ հատուածները առաջ բերել այստեղ։ որովհետեւ մեր անմիջական նպատակը հայոց պատմութեան գիտութիւնն է։

«Երանի և նրա հարեան երկրների պատմութիւնը» երկու մասիցն է բաղկացած։ առաջին մասի վերնագիրն է «Մակեդոնական շրջան» և բռնում է գրքի 1—74 էրեսը։ իսկ երկրորդինը՝ «Արշակունեան շրջան» 75 էրեսից մինչև 172 էրեսը։ Առաջին շրջանի համար մենք ունինք երկու տեսակ դասական (կլասիք) աղբիւր։ մին պաշտօնական։ քաղուած Պտղոմէոս թագաւորի և Վասանդրէացի Արիստոբուլի երկերից։ Արիստոսի և Պլուտարքոսի ձեռքով։ միւսը ոչ պաշտօնական։ յոյն Վիտարքոսի պատմութիւնից։ որ ձեռքութեամբ ծաղկաբաղ է արել Դիոգորոսը։ նոյն աղբիւրիցն են քաղել Վուրցիուսը և Իւստինը կամ իսկապէս Տրոգուս Պոմպէոսը։ որի մէջ խառն են դարձեալ մի երրորդ։ Աղէքսանդր Մակեդոնացուն թշնամի աղբիւրից քաղուածքներ։ Նորագոյն պատմագիրներից գերմանացի Դրոյդէն պատմագիրի շարագրութիւնն առաջին աղբիւրի վերայ է հիմնուած։ մինչ Դրոտէն երկրորդիցն էլ օգտուել է։ Աղէքսանդրի յաջորդների պատմութեան համար աղբիւր են Դիոգորոսը։ Փոտի ծաղկաբաղի մէջ պահուած Արիստոսի և Պլուտարքոսը։ որոնք ամենքն էլ ստուգապատում կարգիացի Հիերոնիմոսիցն են քաղել։ Նորագոյններից այս մասը մշակել են դարձեալ Դրոյդէն և Գրոտէն։ Սկսած 220 թուից հին աղբիւրների վրայ աւելանում են և Պոլիբիոսի նշանաւոր պատմութեան տուած տեղեկութիւններ։ Հելլենականութեան (Hellenismus) շրջանի շարադրեալ պատմութիւն նորագոյն ժամանակներում բացի Դրոյդէնից ու Գրոտէնից մեզ տալիս է Գուլշմիդը։

Երկրորդ բուն պարթեւական շրջանի օժանդակ միջոցներն ու աղբիւրներն աւելի ևս նուազ են։ մինչև 9 թ. Քրիստոսից առաջ շարայարեալ պատմութիւն է տուել մեզ Տրոգուս Պոմպէոսը։ որի քաղուածքն ունինք մենք Իւստինի երկում։ որի մէջ սակայն ծաղկաբաղ անողը բաց է թողել 94—55 (Քրիստոսից առաջ) թուականների պատմութիւնը։

Հռովմէացոց և Պարթեւաց պատերազմների մասին (53—36 Քրիստոսից առաջ) ընդարձակագոյն պատմում է Պլուտարքոսը Կրասսոսի և Անտոնինոսի կենսագրութիւնների մէջ։ Հռովմէական կայսերութեան շրջանում հռովմէացոց մէջ այն հայեացքն էր կազմուել։ որ պարթեւներն էլ իրենց հաւասար մի աղբ են և երկրիս տիրապետութիւնը բաժանուած

է երկու աղգերի մէջ, այս է ահա պատճառը որ լատին պատմագիրներն աշխատում են մի շարայարեալ պարթևական պատմութիւն տալ մեզ և երբեմն այնպիսի սեղեկութիւններ ևս հաղորդում են, որ ամենեւին կապ չունին հռոմէական պատմութեան հետ: Ըրնորհիւ այս հայեացքի մենք պարթևաց շարայարեալ պատմութիւն ունինք՝ 69 (Քրիստոսից առաջ) — 72 (Քրիստոսից յետոյ) Դիոն Կասսիոսի, Յովսէպոսի և Տակիտոսի երկերի մէջ: Պարթևաց պատմութեան անյայտ շրջաններն են մեզ համար 94—69 Ք-ից առաջ և 72—227 Ք-ից յետոյ: Նշանաւոր աղբիւր են մեզ համար դրամներն սկսած 37 թուականի Քրիստոսից առաջ, որովհետեւ այդ թուականից սկսած նրանց վրայ կան տարեթուեր:

Պարթևաց պատմութեան մշակողներից պիտի յիշենք Յ. Ք. Վալլանին, որի «Արշակունեաց տէրութիւն» 1 վերնագրով գործը և Լոնգեռիւշին, որի «Արշակունեան տարեգրութիւնք» 2 երկն երկուսն էլ հիմնական աղբիւրներ են եղել յետագաների համար: Այս երկու երկերի լրացումն կարող է համարուել Գիլհէմ դը Սէն Կրուայի մի շարագրութիւնըն Ֆրանս. ձեռն: յիշատակարանների մէջ 3. Գրամացիական շարագրութիւններից պարթևաց պատմութեան համար նշանակութիւն ունին Ի. Ք. Վիսկոնտիի յունական դրոշմագիտութիւնն [Iconographie Grecque] Բարթոլոմէյի Արշակունեաց դրամագիտութեան հետազոտութիւնն [Recherches sur la numismatique Arsacide] և Լոնգպէրիէի յիշատակարանն Արշակունի պարթև թագաւորների դրամագիտութեան և ժամանակագրութեան վերայ [Mémoires sur la chronologie et l'iconographie des rois Parthes Arsacid, Paris 1855]: Գրամների ցանկերի հրատարակութիւններից նշանաւոր են պարթևների պատմութեան համար կոմս Պրոկէշ—Օստէնի «Պարթև թագաւորների դրամները» 4 և Պէրսի Գարդների «պարթևական դրամները» 5: Պարթևաց պատմութեան վերաբերեալ նոր շարագրութիւններից աչքի ընկնողներն են Հ. Շնայդէվերթի, Գ. Ռաուլինսընի և Ֆր.

Զպէգէլի երկերն, իսկ դրամագիտութեան վերաբերեալ Յ. Լինդսայի գործը:

Բացի այս օժանդակ աղբիւրներից և ամբողջական շրջանների հետազոտութիւններից կան բազմաթիւ առանձնական խնդիրների մշակութեան նուիրուած մենագրութիւններ, որ առիթ կունենանք յիշատակելու պատմութեան ընթացքում:

## Ա. Հայաստանը Մակեդոնական շրջանում:

Աղէքսանդր Մակեդոնացին վերջնական հարուած տուաւ պարսիկ Աքեմենեան հարստութեան Գաուգամելայի ճակատամարտում, որից յետոյ 1-ին հոկտեմբերի 331 թ. Քրիստոսից առաջ, իրեն Ասիոյ թագաւոր հրատարակեց, Թէպէտ և այս ճակատամարտից յետոյ Մակեդոնացին գեռ ևս շատ կռիւներ մղեց մինչև պարսից տէրութեան ամբողջ դրաւումն, սակայն այդ թուականից իսկ սկսուում է մակեդոնական գերիշխանութիւնն Ասիայում և Աղէքսանդրի արքայից արքայութիւնը:

Հայաստանն Աքեմենեան շրջանում պարսից տէրութեան մի սատրապութիւնն էր կազմում, դրան վկայ են Գարեհի արձանագրութիւնները: Մակեդոնացիք ժառանգելով Աքեմենեան տէրութիւնն ամբողջապէս, տէր համարուեցան և Հայաստանի թէպէտ և յատկապէս չը նուաճեցին այդ երկիրը: Հայաստանի վերաբերութեամբ Աղէքսանդրն անշուշտ այնպէս վարուեցաւ, ինչպէս այլ սատրապութիւնների հետ, հին սատրապն համարուեցաւ նոր արքայից արքայի պաշտօնեայ, իսկ երկրի վարչութիւնըն և ներքին կազմակերպութիւնը նոյնը մնաց:

Դէպի Մարաստան ձեռնարկած արշաւների ժամանակ Աղէքսանդրի գեղերն անցան և Հայաստանի սահմաններով, բայց նրանք չը մնացին այնտեղ, այլ մեծ աշխարհակալի հեռաւոր արշաւներին մասնակցելու շտապեցին: Աղէքսանդրի և նրա անմիջական յաջորդների ժամանակ Հայաստանի անուրը չը կայ ամենեւին սատրապութիւնների մէջ, որ և է սատրապի անուն անգամ յայտնի չէ, հաւանական է, որ ով պարսից տիրապետութեան ժամանակ երկրի սատրապն էր, նա էլ տէր մնաց Հայաստանին ինչպէս Ատրպատէսը, որ 328-ին Մարաստան սատրապ ուղարկուեցաւ և ապա 321-ից սկսած հիմնեց Ատրպատականի փոքրիկ անկախ թագաւորութիւնը: Ատրպատականի թագաւորութիւնն համարուում է Աղէքսանդրի տէրութիւնից բաժանուած և անկախութեան հասած երկրներից առաջինը 1: Հաւանական է կարծելը, որ Հայաստանն

1. I. Foy Vaillant, Arsacidarum imperium, Paris 172.

2. L. Du Four de Longuerue, Annales Arsacidarum, Strassburg 1732.

3. G. E. I. Guilhem des Sainte-Croix, Mémoire sur le gouvernement des Parthes [Mém. de l'Acad. des Inscr., L. 48 ff. 755 ff.]:

4. Le C-te Prokesch-Osten, Les monnaies des rois Parthes, Paris 1874—75.

5. Percy Gardner, The Parthian coinage, London 1877.

աւելի ևս վաղ հասած լինի անկախութեան, այսինքն Գառգամէլայի ճակատամարտից քիչ վերջը՝ որովհետեւ ոչ Աղէքսանդրի և ոչ տէրութեան խնամակալների ժամանակ չենք լսում մենք Հայաստան ուղարկուած որ և է սատրապի անուն:

Աղէքսանդրի ժառանգութիւնից անկախ տէրութիւններ կազմելու ձգտումն երեւան եկաւ նրա մահուանից քիչ յետոյ, Բաբելոնի սատրապ Սելևկոսը, երբ Պտղոմէոսի օգնութեամբ կրկին իւր սատրապութիւնը ձեռք ձգեց 312-ին, արեւելցիք նրան անկախ թագաւոր համարեցին: Այս 312 թվուականն է ահա, որ համարուում է տարեգլուխ Սելևկեան տարեթիւի, որ սովորաբար և ասորական տարեթիւ է կոչուում: Սելևկոս Նիկատորը, որ իշխեց 312—280, բաժանեց իւր տէրութիւնը 72 սատրապութեանց, որոնց մէջ պիտի հաշուել և Հայաստանն, անշուշտ իւր տեղական իշխանով: Սրա յաջորդ Անտիոքոս Սոտերի (280—261) ժամանակ ընդունուեցաւ մակեդոնական տէրութեան երեքի բաժանումն, մի հարստութիւնը Ասիայում, միւսը Եւրոպայում և երրորդը Եգիպտոսում: Այս բաժանման հիման վրայ Հայաստանն ընկնում է Սելևկեանց տէրութեան շրջանում: Անտիոքոս Սոտերի ժամանակ կատարուեցաւ Վասպից ծովի հետադարձութիւնն ծովապետ Պատրոկլէսի ձեռքով: Մարաստանում հիմնուած քաղաքների թուին նայելով պէտք է գուշակել, որ Անտիոքոսի տէրութիւնն արեւմուտքում ապահով էր համարուում, ուստի և նա արեւելեան և միջին երկրների ապահովութեան մասին էր մտածում:

Անտիոքոս Սոտերին յաջորդում է նրա երկրորդ որդին ԱՆՏԻՈՒՔՈՍ Բ. ԹԵՍՍ (261—246), որ մի մեղի և շողքորթների ձեռքին խաղալիկ դարձած թագաւոր էր, սրա ժամանակ բաժանուեց Սելևկեան տէրութիւնից հիւսիս արեւելեան Իրանն, ուր Սոգդիանան, Մարգիանան և Բակտրեան միացած կազմեցին յունական այն թագաւորութիւնն, որ Բակտրիայի թագաւորութիւնն անունով երկար ժամանակ տեւեց, Յունական այս նոր թագաւորութեան հաստատութիւնն եղաւ առաջին իսթանն պարթեաների ապստամբութեան, Հիւսիս արեւելեան Իրանի սահմաններում ապրում էին վրանաբնակ աւազակաբարոյ ցեղեր, որոնք շարունակ յարձակումներ էին գործում Սելևկեան տէրութեան սահմաններն և աւարով յղիացած քաշուում էին իրենց աշտոպանները: Այսպիսի ցեղերի համար ձեռնտու էր կենդանական կառավարութեան հեռու Բաբելոնում լինելը, ուստի երբ իրենց սահմաններում հաստատուեց Բակտրիական ուժեղ թագաւորութիւնն, նրանք դէպի արեւելք դէպի Սելևկեան սահմանները

քաշուեցին: Այսպիսի թափառական ազգ էր Դահերի ազգը, որի մի ցեղն էին կազմում Պարնիացիք, որոնց արօտատեղիք բակտրիական սահմաններում Ոքոս [այժմ Թէքէն] ամիրին էին գտնուում: Պարնիացիների առաջնորդ երկու եղբարք Արշակ և Տրդատ Բակտրիայում թագաւորութիւն հաստատելուց յետոյ քաշուեցան դէպի արեւմուտք և հաստատուեցան Պարթիայի սահմաններում:

Պարթեացի երկրի սատրապն էր այդ միջոցին, ասում է պաշտօնական աւանդութիւնն՝ Փերեկլէս, որ Պարնիացիների առաջնորդ եղբայրներից կրտսերի, Տրդատի վերայ բռնութիւն էր ուզում գործել, որ և պատճառ եղաւ դրանց ապստամբութեան: Արշակը և Տրդատը կուս սկսան սատրապի դէմ սպանեցին նրան և տիրեցին Պարթեաց երկրին, այսպէս 250 թ. Բրիտանիայի առաջ գահ բարձրացաւ պարթեաց առաջին թագաւոր Արշակը:

Այս է պարթեական վերջին պաշտօնական աւանդութիւնն, որ աշխատում է պարթեաց և աքեմենեաց հարստութիւնների մէջ կապ ևս հաստատել: Ճշմարտութիւնն սակայն այն է, որ պարթեաց երկրում Արշակը չէ թագաւորել, այլ նա եղել է Պարթիայից դէպի հիւսիս արեւմուտք գտնուած Աստուէնի երկրի, որի մայրաքաղաքն էր Աղաակ, իշխան իսկ նրա եղբայր Տրդատն է, որ երկու տարի վերջը 248—47-ին թագաւորել է Պարթեաց երկրում: Պաշտօնական աւանդութեան յիշատակած Փերեկլէսն էլ ոչ թէ պարթեաց երկրի սատրապ է եղել, այլ Աստուէնէի եպարքոս:

Սելևկեան տէրութեան վիճակն այնպիսի էր, որ ապստամբներին նուաճելու մասին մտածել անգամ կարող չէին Սելևկոսի յաջորդները: Անտիոքոս Բ-ին յաջորդել էր Սելևկոս Բ. Վալլինսկոսը (246—226), որ պատերազմ էր մղում իւր եղբոր դէմ և որի տէրութիւնը գրեթէ բոլորովին նուաճել էր Եգիպտոսի թագաւոր Պտղոմէոս Եւերգետէսը, 242-ին կամ 241-ին Անկիւրիայի մօտ Սելևկոս Բ. յաղթուեց իւր եղբայր Անտիոքոս Հեկտորացի և ձայն տարածուեցաւ, որն ինքն էլ ճակատամարտումն ընկել է. այս համարի վրայ ահա Տրդատ Արշակ կոչուող Պարնիացիների առաջնորդը մտաւ Պարթիա և երկրի եպարքոս Անդրագորասին սպանելով նուաճեց Պարթեաց աշխարհը:

Պարնական Դահերի մասին մեր ունեցած տեղեկութիւններն հետեւեալներն են. Սիր Դարիայի և Արալի լճի միւս կողմում ապրող Բասանդիացի կամ Պարիացի կոչուող Դահերի մի ցեղն էին Պարները, որ ներքին խռովութիւնների պատճառով այնտեղից գաղթել էին դէպի Հիւրկանիա կամ Վրկան և դէպի Վասպից ծովի արեւելեան կողմի անապատը:

Պարնիացիք պահեցին իրենց սկիւթական թափառականներին յատուկ բնակարանները, նրանց լեզուի մասին հաղորդում են, որ միջին տեղն էր բռնում սկիւթականի և մարաց լեզուի և մի խառնուրդ էր այդ երկուսի, այս շատ բնական է, որովհետեւ հնումն մինչև հարաւային Ռուսիայի անապատներն Արիացիք էին ապրում, որոնց մի ցեղն էին և Դասեր, ուստի և նրանց լեզուն էլ պարսկականի մի բարբառ պիտի լինէր, Պարթևները ժամանակի ընթացքում թողին իրենց սկիւթական զգեստներն և սեփականեցին մարական զգեստները, սպառազինութիւնը միայն պահպանեցին, որի առանձնայատկութիւնն էր մի հիւսկէն ասպար, որ պատում էր թէ հեծեալին և թէ ձիուն, Դրամների վրայ պետութեան հիմնադիրը մի այսպիսի ասպար է հագած, հեծեալի ոտներն ու ձեռները բաց են, ոտներին կօշիկներ կան, որ խրացներով են կապուած, զիսկին կայ մի կոնաձև սաղաւարտ, որի կողքերից և յետևից կախուած են ականջապսեաններ և վզապսեան, Սկսած Միհրդատ Ա-ից պարթևները փոխեցին այս զգեստը պարսկական արքայից արքաների զգեստի հետ:

Պարթևաց երկրի նուաճողներն արի հեծեալներ էին, ազատական համար ամօթ էր համարուում հետիոտն գնալը. ազգային ղեկն էր աղեղն պատերազմելու ժամանակ պարթևները սիրում էին յարձակուել և ապա գէպի յետ նետեր արձակելով փախուստ կեղծել, Թափառական սկիւթների բարքերից շատ բան մնաց գեռ Արշակունիների մէջ, մանաւանդ որ նրանք շարունակ յարաբերութիւններ էին պահպանում իրենց անապատաբնակ ազգակիցների հետ, որոնց մօտ շատ Արշակունիներ ապաստան են գտել յետագայ ժամանակներում և նրանց օգնութեամբ կրկին իրենց հայրենի գահը ժառանգել, Հարկաւ ժամանակի ընթացքում երկրի տէրերն սեփականեցին իրենց իրանցիների բարք ու վարքն և բոլորովին խառնուեցան իրենց հպատակների հետ, Պարթևաց տէրութիւնն խիստ աղնուապետական էր, սակաւամիլ ազատունիները իշխում էին ստրուկների բազմութեամբ, ստրուկին ազատելն արգելուած էր կամ ստոյգն ասելով անհնարին էր, Ստրուկների թուի մասին գաղափար կազմելու համար հերիք է դիտենալը, որ Արասոսին յաղթող Սուրէնի բանակում 10,000 հեծեալ կային, որոնք ամենքն էլ իւր ստրուկներն ու ճորտերն էին և այն 50,000 հեծեալներից, որ գուրս եկան Անտիոսի դիմացը, միայն 400 հոգի էին ապատները:

Տրդատ Արշակ առաջին պարթև թագաւորը տիրեց նաև Արկանաց աշխարհին և մեծ բանակ կազմեց Սելեկեաններին զիմադրելու և Բակտրիա-

ցիներից ապահով լինելու համար, Բակտրիոյ թագաւորութեան հիմնադիր Դիոգատոս Ա. մեռաւ շուտով, իսկ նրա յաջորդը՝ Դիոգատոս Բ. դաշն կուեց Տրդատի հետ, որպէս զի զիմադրել կարողանան Սելեկեաններին, որոնցից երկուսն էլ ապրւտամբ էին:

Սելեկոս Բ. այդ միջոցին հաշտուել էր իւր թշնամիների հետ, յաղթել էր եղբօրն և քայքայուող տէրութիւնը կրկին միացել էր, ուստի շուրջ 238 թ. զօրքով գլխեց ապստամբների դէմ, Սելեկոսի մերձեակը լսելով Տրդատը քաշուեց թափառական Ապագիակների երկիրն, ապա յետ արձաւ և ճակատեց Սելեկոսի դէմ, որին յաղթեց, այս յաղթութեան օրն պարթևներն համարում են իրենց անկախութեան ծննդեան օրն, որ ամենայն տարի տօնուում էր, Անտիոքում ծագած մի ապստամբութիւնն ստիպեց Սելեկոսին յետ գառնալ իւր մայրաքաղաքը, ուստի պարթևներն ու Բակտրիացիք ժամանակ ունեցան կազդուութելու, Տրդատն այդ ժամանակամիջոցը գործ դրաւ ամրոցների, բերդեր շինելու և զօրքը կազմակերպելու, Սրա շինած քաղաքներից նշանաւոր է Ապարտէնում, Դարա կամ Դարալումը, Տրդատը 37 տարի իշխեց և իւր տէրութեան վերջին ժամանակներն զրամների վրայ սկսաւ իրեն արքայից արքայ կոչել, Տրդատի մահը պէտք է տեղի ունեցած լինի 211—10-ին, նրա յիշատակը շատ յարգուած էր պարթևների մէջ:

Սելեկոս Բ.-ին յաջորդեց իւր որդի Սելեկոս Գ. Սոսէր (226—223), որի վաղահաս մահուանից յետոյ գահը բարձրացաւ նրա եղբայր Անտիոքոս Գ. Մեծը (223—187): Մարաստանի սատրապ Մոլոնի ապստամբութիւնը քիչ մնաց կրկին քայքայեւ Սելեկեան տէրութիւնը, բայց շուրհիւ երիտասարդ Անտիոքոսի եռանդի և արիութեան ապստամբն ընկճուեցաւ և տէրութեան ամրոցութիւնն կրկին անկախութեանց, Մոլոնին յաղթելու տարին 220-ին, Անտիոքոսը մի արշաւանք սկսաւ Արտաքսանէսի ընդդէմ, որ իշխում էր Ատրոպատականի և արեւելեան Հայաստանի վրայ, Ատրոպատականի իշխանութեան սահմանները որոշելուս Պոլիբիոսը (V, 55, 7) Ֆալիսի վերին բաժնի պոնտեան բնակիչների երկիրը սահմանակից է համարում արտաքսանէսի երկրին, որից հետեւում է որ ատրպատական թագաւորները՝ Աղէքսանդրի յաջորդների ժամանակ անկախ տիրում էին Հայաստանի գոնէ արեւելեան հիւսիսային բաժնին, Արտաքսանէսն ընկի իշխանների մէջ ամենից զօրաւորն և եռանդունն էր համարուում, Անտիոքոսի արշաւանքն իտրին ձերութեան հասած Արտաքսանէսին այնպէս սարսափահար ա-

րաւ, որ նա անմիջապէս համաձայնեց Անտիոքոսին ձեռնադրու մի դաշնագրութեան:

Անտիոքոս Գ. մեծութեան հռչակ ստացաւ այն ժամանակ, երբ իւր տէրութեան արեւմուտքն ապահովելուց յետոյ մի արշաւանք ձեռնարկեց դէպի արեւելեան սատրապութիւնները: Դնչպէս Սելեւկեան տէրութիւնն արեւելքում, այնպէս էլ արեւմուտքում կազմուել էին անկախ տեղական թագաւորութիւններ, որոնցից մէկն էր եւ Արսամիսատայի հայկական թագաւորութիւնը: Անտիոքոսի ժամանակ Արսամիսատայում թագաւորում էր Զսերքսէսը, որի ամուսինը Անտիոքոսի քոյրն էր. սա իւր եղբոր դրոմման սպանել էր Զսերքսէսին: Նախ քան դէպի արեւելք արշաւելն, թագաւորը Արսամիսատայ դիմեց եւ հայկական այդ փոքրիկ թագաւորութեան գործերը կարգի բերաւ:<sup>1</sup> Այդ տեղից նա դիմեց Եփրատով դէպի հարաւ և ջրի ճանապարհով հասաւ Սելեւկիա, որտեղից դէպի Փարստան անցաւ 209-ին, ուր կողոպտեց Եկրատանի տաճարի հարստութիւնները: Այստեղից արշաւեց Անտիոքոս պարթեւաց ընդդէմ, ուր իշխում էր Արշակ Բ. որ յաջորդել էր իւր հայր Տրգատ Արշակին: Անտիոքոսի բանակը բաղկացած էր 100,000 հետեակ և 200,000 հեծեալ զօրքից, որի առաջ խոյս տուին պարթեւները: Վերականուր նրանք դէմ գնելու փորձ արին և յաղթուեցան, ուստի և Արշակ Բ. ստիպուեց խաղաղութեան դաշն կուել, որի մէջ նա ստիպուած եղաւ ճանաչելու մակեդոնական գերիշխանութիւնը: 208 թուին Անտիոքոսն արշաւեց բաղտրիական աւելի զօրաւոր տէրութեան դէմ, որ սակայն 206 թուին խաղաղութեան դաշինքով վերջացաւ, որից յետոյ Անտիոքոսը հնդկական սահմանակից թագաւորի հետ ևս դաշն գնելով վերադարձաւ իւր մայրաքաղաքը: Այսպիսով Սելեւկեան իշխանութիւնն ապահովեց արեւելեան կողմից:

Բոլորովին այլ հանգամանքների մէջ սկսաւ Անտիոքոսը 18 տարի յետոյ իւր երկրորդ արշաւանքը դէպի վերին Ասիա, Հռովմի հետ վարած պատերազմներում կրած պարտութիւնը կտրել էր Սելեւկեան իշխանութեան դիմն ու հռչակը, արեւելեան ազգերը զգացել էին մակեդոնական ուժի նուազումն և աւելի համարձակ էին դարձել իրենց անկախութեան ձգտումների մէջ, Հռովմի անյադ պահանջներն աղքատացրել էին Անտիոքոսին, որ

դրամ ձեռք ձգելու համար արշաւել էր Ելիւմպիսի Բելի տաճարը կողոպտելու, որ սակայն պատճառեղաւ իւր կործանման: Ելիւմպիցիք համախմբուեցան և ոչնչացրին Անտիոքոսի բանակն և իրեն էլ սպանեցին 187 թ: Այս ժամանակներից Ելիւմպիսի փոքրիկ անկախ տէրութիւնը կազմուեց Սուդիանայում: Անտիոքոս Մեծին յաջորդեցին իրեն որդիքը, նախ թոյլ Սելեւկոս Գ. Գիլոպատոսը (187—175), ապա հանձարաւոր Անտիոքոս Գ. Եւպատոսը (175—174), որ ճանաչել էր իւր տէրութեան թոյլ կողմերն, սակայն իւր եռանդի շատութեան պատճառաւ աւելի ևս փութացրեց տէրութեան կործանումն: Սա ևս գրամի մեծ նեղութիւն էր կրում, ուստի 166 թուին մի արշաւանք սկսեց հարկ հաւաքելու և դանձարանք լցնելու համար: Անտիոքոսը դիմեց նախ դէպի Մեծ հայր: Հայաստանն առհասարակ Դաւեղդոնացիներին երբէք կտտարելապէս չէ պատկանել, նրա կախումն միայն անուանական է եղել. միայն մեծն Անտիոքոսի օրով է, որ լսում ենք թէ նա ըստմանելով Հայաստանը, Մեծ Հայքում ստրատէգ է կարգում Արտաքսիասին, իսկ փոքր Հայքում՝ Զադրիադէսին, բայց Հռովմի հետ պատերազմելու ժամանակ սրանք յարաբերութիւններ են հաստատում հռովմեացոց հետ եւ նրանց աջակցութեամբ 189 թուին ծանաչում են իբրեւ առանձին անկախ տէրութիւններ: Անտիոքոսի հաղորդում է իսկ, որ Անտիոքոսի մօտից փախստական Հաննիբալը Մեծ Հայքի իշխան Արտաքսիասին է ապաւինում, որ Կարթագենայի զօրավարի յատակագծով շինում է իւր Արտաքսատա Արտաշատ մայրաքաղաքը, որ յաջորդ դարերում միշտ իբրեւ մայրաքաղաք է յիշուում Հայաստանի: Մեծ Հայքի թագաւորութիւնն քիչ ժամանակում այնքան զօրանում է, որ տիրում է Մարաստանի գաւառներից Կասպիէնէին, Փառնիստեսին եւ Բաստորոպէղային. փոքր Հայքն եւս նենգութեամբ գրեթէ միացնում է իւր տէրութեան հետ: Անտիոքոսը մոռնում է Հայաստանի խորքը, Արտաքսիասին յաղթում եւ գերի է բռնում, բայց կրկին արձակում է եւ իւր թագաւորութեան մէջ հաստատում:

Այս արշաւանքից յետոյ Անտիոքոսը Պարսկաստան է անցնում, մի քանի յաղթութիւններ է տանում, քաղաքներ է հիմնում և հին գաղութներն է վերականգնում, բայց ինքն էլ իւր հօր պէս զոհ է գնում տաճարակապտութեան ժամանակ, որովհետեւ զրամական նեղութիւնը բառնալու համար Ելիւմպիսի նանէ գիցուհու տաճարը կողոպտելու գիտաւորութեան պատճառով շրջակայ ժողո-

1. Sbe Ioannes Antiochenus, Müller IV. 557.

Վուրդը ոտքի է կանգնում և հալածում է նրան, այս միջոցին լուր է առնում և հրէից ապստամբութեան և մինչ ինքը պարսիկների դէմ էր արշաւում մեռնում է թորախտից 164 թուին։ Սրան յաջորդում է մի մանուկ։ Անտիոքոս Ե. Եւպատոր (164—162), որին սպանելով թագաւորում է Դեմետրիոս Սոտէր (162—150), որի դէմ Հռոմէր շարունակ թշնամիք էր յարուցանում։ Մարաստանի սատրապն էր Տիմարքոս Միլետացին, որ նենգաւոր և ազդեցիկ գանձապահ Հերակլիդէսի եղբայրն էր, որ սրա նման նախկին թագաւորի սիրելին էր եղել և քանիցս իրրեւ պատգամաւոր Հռոմէր էր ուղարկուել։ Արդ սա կրկին Հռոմէր գնաց և ծերակուտի համաձայնութիւնն առաւ թագաւոր կոչուելու (161)։ Սա դաշն կոեց Մեծ Հայքի արքայ Արտաքսիասի (Արտաշէս) հետ ընդդէմ Դեմետրիոսի։ Նուաճեց Մարաստանի հարաւային ազգերին, տիրեց մինչև Բարսէլոն, Բարսէլոնիայի ժողովուրդն առում էր Տիմարքոսին, ուստի երբ Դիմետրիոսը նրա դէմ դուրս եկաւ, ժողովրդի համակրութիւնն իւր կողմն ունենալով յաղթեց Տիմարքոսին և սպանեց, իսկ նրա եղբայրը փախստեամբ ազատուեց (160)։ Այս յաղթութիւնը մեծ ոյժ տուաւ Սելեւկեաններին, որովհետև հռոմէական խոստումներով խարուողները տեսան կրկին անգամ, որ Հռոմէի պաշտպանութիւնն նշանակութիւն չունէր այն երկրներում, ուր նրա ձեռքը չէր հասնում։ Բայց մակեդոնական տէրութեան վտանգ չէր սպառնում ապստամբ կուսակալներից, այլ արեւելեան ազգերից։ Այս ազգերից առաջին տեղը պարթեւներին է պատկանում։

Արշակ Բ-ին յաջորդել էր Քրիստոստիոս, որ կառավարեց 15 տարի (191—176), սա զրամենի վրայ իրեն կոչում է Արշակ Քիլագեւլիոս (եղբայրասէր), Քիլհելէն (Հելլենասէր), Սրան յաջորդում է իւր անդրանիկ որդին Քրաստէս, որ զրամենի վրայ Արշակ Թէոպատոր է կոչուում։ Այս թագաւորների ժամանակ պարթեւների տէրութիւնն ընդարձակուել էր դէպի հիւսիսարեւմուտք և հարաւ։ Քրաստէսն իւր տէրութիւնը յանձնեց (չուրջ 171 թուին) իւր հանձարաւոր եղբայր Միթրիդատէսին (Միհրդատ), որ զրամենի վրայ կոչուում է Արշակ Եպիփանէս, այլ և Արշակ Քիլհելէն։ Սա էր այն թագաւորն ահա, որ պարթեւների իշխանութիւնն Իրանում հաստատեց։

(Շարունակելի)

Ն. Բարսեղեան.

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւերջերս Folk=Lore գիտնական եռամսեայ հանդէսի 2 հ.-ում լոյս է տեսել բազմաշխատ հայագէտ պրոֆ. Կոնիրիի մի յօդուածը՝ The Barlaam and Iosaphat Legend վերնագրով։ Յարգելի ուսուցչապետն ուշադրութիւն է հրաւիրում այստեղ Բարաղամ և Յոփսափատ նշանաւոր դրոյցի վրացերէն և հայերէն թարգմանութեանց վերայ և այսպիսով այդ դրոյցին վերաբերեալ արդէն բաւական ընդարձակ գրականութիւնը ճոխացնում է մի նոր հետաքրքիր երկով։ Նա թարգմանաբար յառաջ է բերում նախ մի քանի հատուածներ վրացերէն թարգմանութիւնից՝ և պրոֆ. Մարրի այդ մասին գրած մեծ նախասուլիսից։ Ապա դնում է հայկական օրինակի առաջին կէտի և վերջին հատուածի թարգմանութիւնը, և վերջն աւելացնում է իւր եզրակացութիւններն այդ թարգմանութեանց արժէքի և միւս օրինակների հետ ունեցած աղբնշուլիսների մասին։ Հայերէնը նորա կարծիքով համառօտեալ թարգմանութիւն է ասորերէնից, բայց իրրեւ հին թարգմանութիւն իւր նշանակութիւնն ունի։ Վրացերէն օրինակն ամենից կարեւորն է։

Նոյն հեղինակը մի ուրիշ յօդուածով՝ On the sources of the text of S. Athanasius, ցոյց է տալիս, թէ ս. Աթանասի գրուածների հայերէն թարգմանութիւնն ինչքան նպաստել կարող է նոցա ընդգրկի թերութիւններն ուղղելու։

Մի քանի ամիս առաջ ևս պրոֆ. Կոնիրի On some Armenian votitiae վերնագրով մի յօդուած էր գրել Byzantinische Zeitschrift թերթի մէջ՝ հայկական ձեռագրերից առած ինչ ինչ կարեւոր ծանօթութիւնների մասին։

Հայկական խնդրին վերաբերեալ երկու շատ հետաքրքիր տետրակներ են լոյս տեսել նորերս. ա.-ը՝ Les Arméniens et la question arménienne, conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'institut à l'Hotel des Sociétés savantes, le 9 juin 1896. Paris (Հայերը և հայկական Հարցը, հրապարակաստութիւն Անատոլ Լերոյ-Բօլիւիւի, կարդացուած Գիտնական ընկերութեանց հաստատութեան մէջ, 1886 յունիս 9-ին. Փարիզ)։ Բ.-ը՝ Martyrologe arménien, tableau officiel des Massacres d'Arménie, dressé après enquêtes par les six ambassades de Constantinople etc. par le P. S. Charmetant. Paris (Հայկական մարտիրոսաբանութիւն, պաշտօնական նկարագիր հայկական կոտորածների Կ. Պօլ-